ՎՐԱՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն խորագրի ներքո տակավին 1991 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի № 5-ում լույս է տեսել պրոֆ. Իվանե Դոլիձեի կազմած «Վրաց իրավունքի հուշարձանները» վերտառությունը կրող վավերագրերի ժողովածուի 2—5-րդ հատորներից քաղված թարգմանաբար ներկայացվող, ստորև հրապարակվող նյութերի մի մասը։ Այնտեղ էլ արժևորվել են այս վավերագրերը, որպես կարևոր աղբյուր վիրահայության, ինչպես նաև հայ-վրաց առնչությունների պատմության առումով։ Այստեղ միայն հարկ ենք համարում նշել, որ հրապարակվող վավերագրերը վկայում են Քարթլիում, մասնավորապես Տփղիսի մերձակայքում, զուտ հայաբնակ գյուղերի՝ առկայությունը (օրինակ, Խատիսթելեթի, Կրծանիս), որտեղ կային հայկական եկեղեցիներ։ Ինչպես երևում է կաթողիկոս Անտոն Երկրորդի հրովարտակից, Կրծանիսում ժառանգաբար տանուտերի պաշտոնը վարում էին Դավիթենց տոհմի ներկայացուցիչները։

Հրապարակվող վավերագրերը ուշագրավ են նաև վիրահայության սոցիալական կառուցվածքը, նրանց տնտեսական, առևտրական գործունեությունը ուսումնասիրելու տեսակետից։

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

№ 1

ԴԱՏԱՎՃԻՌ
ՈՒՄԵԿԱՆՑ ՕՍԵՓԻ ՊԱՐՏՔԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1773 թ., փետրվարի 16

Երջանիկ միապետին Ումեկանց Օսեփը խնդրագիր է մատուցել.—Հորս պարտքը շատ է մնացել ինձ վրա։ Պարտատերերը, այո, անհանգստացնում են, հնար չունեմ, և այդ պատճառով որդիներս Ղզլար են փախել և չեն գալիս։

Երջանիկ միապետը մեզ՝ քաղաքի մովրով (կառավարիչ) Դավիթին և Մելիք-տանուտեր Ավետիքին հրամանագիր է շնորհել առ այն, որ սրանց պարտատերերին ի մի հավաքեն և ինչ որ գտնեն սրանց պատկանող, այն էլ հատկացնեն Թումանենց։ Եվ եթե ոչինչ չգտնեն, տունը վաճառեն և ինչ հասնում է Թումանենց, այնպես բաժանեն։ Մենք էլ փնտրտեցինք, պարտատերերն էլ մասնակցեցին։ Տնից գատ ուրիշ ոչինչ չգտանք։ Այս տունը գնահատեցինք, գնահատվեց քսանմեկ թուման։ Սրանից տասնմեկ թումանը գրավի գումարն էր, և տասներկու թուման էլ պարտք վերցրինք, որ սրա պարտատերերը, ովքեր ներկա էին, թումանի դիմաց երեսուն շահի տոկոս ստանան և բաժանվեն։

Տունը այն պատճառով չվաճառեցինք, քանի որ պարտատիրոջ նկատմամբ ունեցած վախից Ղզլարում են հիմնավորվել, քաղաքում որ տուն էլ չունենան, ինչի վրա հույս դնելով կվերադառնան։ Գուցե սրանից հետո փորձեն (վերադառնալ) և իրենց տունն էլ փրկագնեն։

Իսկ հիմա էլ, որ պատրատերերին տան, այն էլ պիտի վճարեն, որպեսզի ոչ միապետի հպատակը կորչի և ոչ էլ պարտատերերի դրացին։ Այսպի-

սով, ինչքան որ նախկին պարտք կար, պարտատերերից ովքեր ներկա էին, Թումանի դիմաց երեսուն շահի տվեցինք։

Եվ եթե գտնվի որևէ մեկը, որ ներկա չի գտնվել, կամ էլ այդ ժամանակ չի համաձայնվել, բոլորը պիտի այսպես համաձայնվեն, որ Թումանի դիմաց երեսուն շահի տոկոս ստանան։ Այլ կերպ պարտատերերը այս Օսեփի և նրա որդիների հետ ոչ մի գործ չունեն։

Գրվեց սույնը փետրվարի 16-ին, քրոնիկոնի 461 թ.

Երկու կնիք (վրացերեն)

1. Նորին բարձրության ծառա, փեսա Տփղիսի մովրով Դավիթ։
2. Տանուտեր Ավետիք։ Վավերագրի գլխավերևում։

Մենք՝ Հերակլ արքաս, այս քաղաքի մովրովի և մելիքի կայացրած դատավճիռը վավերացնում ենք։ Հուլիսի 13, քրոնիկոնի 463 թ.։

Կնիք. Քնարն է հնչում, Դավիթը որդի է կոչում Կախեթի օծյալ արքային, Հերակլ։

Վավերագրի լուսանցքում.

Մենք՝ պարոնորդի Գիորգիս, այս քաղաքի մովրովի և մելիքի կայացրած դատավճիռը հաստատում ենք. հունվարի 26, քրոնիկոնի 464 թ.։

Կնիք՝ Թագավորի որդի Գիորգի։

Մենք՝ պարոնորդի պարոն Լեոնս, այս քաղաքի մովրովի և մելիքի կայացրած դատավճիռը հաստատում ենք։ Մարտի 10, քրոնիկոնի 463 թ.։

Կնիք. օծյալ արքայաց որդուն Լեոն են կոչում անվամբ[1]։

№ 2

ԴԱՏԱՎՃԻՌ ԵՍԱՅԻ ԱՂԱՅԻ ԵՎ ԹԱՂԱՅԻ ՈՐԴԻ ՄԿՐՏՈՒՄԻ ՊԱՐՏՔԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1776 թ., հունիսի 24

Զմյուռնացի Եսայի աղան Թաղայի որդի Մկրտումի հետ հաշիվ ուներ։ Եկել էր քաղաք, (իմա՝ Տփղիս —Վ. Մ) իր հաշիվն էր պահանջում։ Իսկ Մկրտումը ինչ-ինչ պատճառներ էր ներկայացնում։

Այնուհետև Եսայի աղան երշանկաշնորհ միապետին մատուցել էր խնդրագիր և խնդրում էր արդարադատություն։ Նորին մեծության հրամանով քաղաքի քեթխուդաները ժողով էին գումարել և որոշել։ Այդ հաշվի մեջ, Թաղայի որդու վրա էր մնացել ութ հարյուր ութ ղուրուշ և տասնմեկ փարա։ Այդ մաբլաղն (մնացորդն) էր պահանջում, իսկ (Մկրտումը) չտվեց։

Հետո նորից խնդրագիր մատուցեց և արդարադատություն խնդրեց։ Եվ երջանկաշնորհ միապետը հրամայեց սրանց հաշիվը պարզել։ Նորին բարձրության հրամանով ժողովի հավաքվեցին քաղաքի առաջնորդ Հովհաննես վարդապետի, նվիրակ Մարտիրոս վարդապետի, Գովհար դպիրի, Նազարբեգի որդի Հովսեփի, Մունթոյի որդի Հովսեփի և Տուրփոյի որդի Մորոսեսի մասնակցությամբ։ Ինչ որ խոսելիք ունեին խոսեցին։

Թաղայի որդին ասաց. քո հաշվից ըստ քո նամակի, սոսնձի համար հինգ հարյուր ղուրուշ եմ ուղարկել, որ Բաղոյի որդու մոտ կորավ։

Եսայի աղան ասաց. իմ այն նամակից հետո նորից էի նամակ գրել քեզ, որ իմ հաշիվը լրիվ մահտեսի Խաչատուրին հանձնեիր։ Այլ ծախսը, որ հաշվի մեջ ես մտցրել, եթե այդ հինգ հարյուր ղուրուշը ինձ էիր ուղարկել, ինչու այդ էլ հաշվի մեջ չէիր մտցրել։

Եսայի աղան այս խնդրում իրավացի դուրս եկավ։ Մենք այսպես որոշեցինք, որ այդ հինգ հարյուր ղուրուշը Թաղայի որդին պիտի հատուցի հետևյալ պատճառով, քանի որ Եսայի աղան դրել է, որ իր հաշիվը ամբողջա-

---

1 Վրաց իրավունքի հուշարձաններ, հ. 4, Թբիլիսի, 1972, էջ 645—646 վավերագիր № 502 (վրացերեն)։

պես մահտեսի Խաչատուրին տա, եթե այդ հինգ հարյուր ղուրուշը տվել է Եսայիին հանձնելու համար, ապա այդ էլ պիտի հաշվի մեջ մտցներ։ Երկրորդ, այն, որ Բաղոյի որդուն լեղակ և ասեղ է տվել ու պայման գրել, որ այս գլխից օգուտը քոնը լինի, իսկ այն գլխից գործ չունես, ուրեմն այդ պայմանագիրը պիտի վերցներ։

Եվ դարձյալ, որ մովրովի մարդու միջոցով կալանքի ես վերցնել տվել, եթե արծաթ չուներ, մուրհակ պիտի վերցներիր։

Այնուհետև շուկայում վիճել են, պիտի երկու-երեք մարդու ասեր, որ ինքը Բաղոյի որդուց հինգ հարյուր ղուրուշ է պահանջում։ Հետո, որ մելիքի միջոցով բռնել և գանահարել է տվել, այդ ժամանակ մելիքին կամ երկու քեթխուդայի պիտի ասեր, որ հինգ հարյուր ղուրուշ է տալիս, որն Եսայի աղայե փողն է։

Այնուհետև ասում է, որ քաղաքից փախել է և նորից վերադարձել։ Նման խարդախ մարդուն չպիտի վստահեր. կամ մուրհակ պիտի վերցներ, կամ մեկ վկայագիր պիտի պատրաստեր, եթե իրավացի էր։

Այնուհետև Թաղայի որդին ընկերոջ հետ միասին, եթե Բաղոյի որդու հետ հաշիվ ուներ և քառասուներեք ղուրուշ է ներդրել և տվել Թաղայի որդուն, եթե որևէ. հաշիվ ուներ, այլևս չպիտի տար, պիտի իր մայր գումարի մեջ պահեր։

Ո՛չ վստահելի վկա, ո՛չ լիազորագիր ունի, արդյոք այդ հինգ հարյուր ղուրուշը տվել է Եսայի աղային, թե ոչ, ոչ ոք չգիտի, ոչ շատը, ոչ քիչն է տվածը երևում։ Եսայի աղան այս խնդրում անմեղ է։

Վերը հիշատակված ութ հարյուր ղուրուշը ամբողջապես և տասնմեկ փարան Թաղայի որդի Մկրտումը Եսայի աղային լրիվ պիտի տա։

Մեր խելքը այդպես կտրեց, և նորին մեծության հրամանը սրանով կատարված ենք համարում։

Հունիսի 14, քրոնիկոնի 464 թ.։

Յոթ հայատառ կնիք։

Վրացագիր կնիք՝ Աստծո ծառա դպիր Գովհար[2]։

№ 3

ԴԱՏԱՎՃԻՌ
ՄԶԵՃԱԲՈՒԿ ՕՐԲԵԼԻԱՆԻՆ ՃՈՐՏ ԱՎԱԳԻ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1777 թ., մայիսի 11.

Մզեճաբուկ Օրբելիանին գանգատվում էր ջուլհակ Ավագին իր ճորտը համարելու առթիվ, սրանց երկու կողմերի վկաները վկայում էին։ Սրանց վկաների վկայությունը պարզելու և դատավճիռ կայացնելու համար երջանիկ միապետը իր ծառա դպրապետին հրամայեց։

Սրանց վկաները բոլորը անձամբ գրավոր վկայություն ներկայացրին, որը այս երկրորդ թերթի վրա մեկ առ մեկ գրված է։ Ավագի վկաների վկայությունը երկրորդ կողմի վկայությունից թեև ավելի թույլ է, սակայն այդ պարագան Ավագի վկաներին կեղծիքի մեջ չմտցրեց, քանի որ տեր Եսային էլ այս վկաների օգտին էր խոսում։ Բայց դատարանում այսպես հայտարարեց. երբ պարոնի հրամանով քաղաքը ցուցակագրեցինք և օտար մարդիկ էինք փնտրում, այն ժամանակ այս ջուլհակ Ավագը գրվեց որպես Օրբելու ճորտ և այս Ավագի վկաներն էլ այս պարագան չժխտեցին և այսպես հայտարարեցին, ճշմարիտ է, Օրբելու ձեռքի տակ էր։ Քանզի այդ այդպես է եղել, եթե այս Ավագը Օրբելուն չպատկաներ, մատյանում էլ որպես Օրբելու ճորտ չէր գրանցվի։

---

2 Նույն տեղում, հ. 5, Թբիլիսի, 1975, էջ 15—16։

Այժմ մենք այս երկու կողմերի վկաներից սաուգապես այսպես տեղեկացանք, մինչ տեր Եսային մատյանը կգրեր, դրանից առաջ ջուլհակը Օրբելուց զատ ոչ մի տեր չի ունեցել և ոչ էլ որևէ մեկին ծառայել է։

Այս մենք այսպես պարզեցինք և տեղեկացանք։ Արդ կամքը նորին բարձրությանն է, գրվել է մայիսի 11-ին, քրոնիկոնի 465 թ.։

Հինգը կնիք.

1. Դատում է դատավորը [Մեկ նախադասություն անհասկանալի է- Վ. Մ.]. Իոանե, 1748։
2. Ես՝ Ամիլախորս, որպես դատավոր զորապետ եմ թագավորի զորությամբ։
3. Քաիխոսրո
4. Աստծո ծառա դպրապետ Թեհմուրազ
5. Աստծո ծառա Թումանիշվիլի դպիր Սուլխան։

Վավերագրի վերին մասում

Մեր հրամանն այս է։ Այն, որ Մզեճաբուկ Օրբելիանիի մասին այսպես են վկայում, թե իբր Ավագի մորից են լսել, Ղափլանիշվիլու տիրությունը, երբ գաղթեց, այս Ավագին երկու տարեկան հասակում իր հետ բերեց։ Եվ այդ են վկայում Երևանի երկրից եկածները, սկզբից եկել են Վաշլովան և ճորտագրվել Օրբելուն։ Այն, որ այդպես է եղել Դմիտրի էշիկաղաբաշին էլ է հաստատում, քանի որ դա այդպես է եղել, այդ ջուլհակ Ավագին հրամանով հանձնում ենք Մզեճաբուկ Օրբելիանիին։ Եթե այդ պատճառները չունենար, քաղաք գալուն պես չէր հատկացվի, որովհետև ում որ քաղաքն է պատկանում, օտար երկրից եկած մարդն էլ նրանը կլինի։

Եսավուլ Ղորղանի որդի Մանուչար, այս ջուլհակ Ավագին հանձնիր Մզեճաբուկին։

Գրվել է մայիսի 12-ին, քրոնիկոնի 465 թ.։ Կնիք. ես ոտնլվաների (իմա՝ եպիսկոպոսների-Վ. Մ.) շնորհիվ եկեղեցին մեծարեցի՝ Հերակլ[3]։

Ջուլհակ Ավագի վկաների վկայությունը

Երջանիկ միապետին հետևյալն ենք հայտնում. ջուլհակ Ավագը, որ բերվեց, սկզբնապես մեզ մոտ եկավ, չորս տարի մեզ մոտ մնացին։ Ես՝ Բարխուդարի որդի Արութինս, սույնի վկան եմ։

Բոլնիսեցի Բայանդուրս ձեզ հայտնում եմ, այս Ավադն երևանցի է, վեց տարի սրանց գյուղերում եմ բնակվել, սույնի վկան եմ Աստծո առաջ, հոր անունն Օհան էր, գյուղի տանուտերն էր։ Թող ձեր կամքը կատարվի։

Ես մահտեսի տեր Օհանեսս, հայտնում եմ. մեկ տարի դրացի էի այս Ավագին քաղաքում, իր զոքանչի հետ վեճ ուներ, իր տնից,—ասում էր նրան,—դուրս գնա, որ Ղափլանենք վաղը մյուս օրը վիճաբանություն չսկսեն ինձ հետ, թե իբր իմ ճորտն ես։ Աստծո առաջ սույնի վկան եմ։

Ղայդուլեցի Փանոսի որդի Ազարիաս սույնի վկան եմ. ճշմարտությանը հավատացեք, բնիկ երևանցի է, երբ Բարխուդարի որդի Արութինի տնից դուրս եկավ, ես անձամբ ութ տարով նրան աշակերտության եմ տվել, երբ չափահաս դառավ, դրա ճորտի աղջկան կնության առավ։ Կամքը ձերն է։

Մեզեճբուկ Ղափլանիշվիլու վկաների վկայությունը

Ես՝ Տեր Բաղդասարս, այս ջուլհակ Ավագի խոստովանահայրս, այսպես եմ վկայում։ Նախ, երդվում եմ Աստծո և հետո Հերակլ արքայի առաջ, որ երբ այս աղային մայրը բերեց, մշտապես նրան ճանաչել եմ որպես Օրբելու

---

3 Նույն տեղում, էջ 34—35։

ճորտ, մորս ներկայությամբ մահացավ, խոստովանահայրը ես էի, երբ առաջին կնոջ հետ ամուսնացավ, ես եմ պսակադրել, և ծառայում էր Օրբելուն։ Քսաներեք թե քսանչորս տարվա ձեռնադրված քահանա եմ, երդվում եմ սուրբ Երուսաղեմում գտնվող Քրիստոսի գերեզմանով, Էջմիածնով, հոգևոր տիրոջով (իմա՝ կաթողիկոսով-Վ. Մ.) և սուրբ Գրիգոր Պարթևացու աջով, որ այս ժամանակաընթացքում եղել է Օրբելու ճորտը։ Ճշմարիտ է, հայի տանն էր բնակվում, Օրբելու տանը չէր բնակվում, որոշ ժամանակ տերտերի մոտ էին բնակվում մայր ու որդի, երբեմն էլ Գարեթուբանում էին լինում մայր ու որդի մեկ հյուղարկում՝ Սածղլեում, սակայն Օրբելուն են պատկանել։ Դուք հրամայեցիք, որ եթե սովի ժամանակ Օրբելու մոտ են եղել, ուրեմն նրան են պատկանել։ Ես երդվում եմ Ձեր արևով, որ սովի ժամանակվանից շատ ավելի առաջ եղել է Օրբելու մոտ։ Թող լինի միապետի կամքը։ Իմ կարգի շնորհը վկա, որ այս ամենն այսպես է եղել։

Ես՝ Շուլավերցի Գրիգորս, Ձեր ճորտը սույնի վկան եմ, որ ես և այս Ավագ տղային սպահանցի ջուլհակին հանձնեցինք։ Նա ութ տարեկան տղա էր, և այդ ջուլհակին Օրբելին հանձնեց, և նրան էր պատկանում։ Երկրորդ, դարձյալ այն, որ նրա մայրն ինձ ասել է, երբ Սաղափլանիշվիլուն (իմա՝ Ղափլանիշվիլիներին պատկանող կալվածքը -Վ. Մ.) գաղթեց, ես այրի էի և երկու տարեկան այս Ավագին հետս տարա Շիրակվան։ Այնտեղ երկրորդ ամուսինս մահացավ։ Եվ այս Ավագը դարձյալ ինձ հետ էր, .եկա Օրբելու մոտ։ Երդվում եմ Աստծով և միապետի առջև, որ այս այդպես է եղել, թե չէ ես նրա ճորտը և ենթական չեմ։ Տակավին Ջառ չէինք գնացել, որ այդպես է եղել և այդպես եմ ականատես եղել, թող վկա լինի այն օրը, որ կգամ և այլևս չեմ վերադառնա (իմա՝ երդվում է իր կյանքով-Վ. Մ.)։

Ես՝ Բարամի որդի Գրիգորս, երդվում եմ Աստծո և Հերակլ թագավորի առջև, որ այն, ինչ լսել եմ տերտերից և Գրիգորից, այն էլ գրում եմ Աստծո առաջ։

Աստված պարոնի դպրապետերի ցավը տա վաշլովանցի տերտերներին և վաշլովանցիներին։ Այնուհետև այս եմ հայտնում, ճշմարիտ բացատրությունն այս է, Մզեճաբուկը, երբ խոսում է Ավագի մասին, Վաշլովանում էլ և քաղաքումն էլ Օրբելուն էին ծառայում։ Եվ մենք քահանայություն ենք կատարել և աշակերտ էլ է եղել։ Երեք անգամ հարսանիք էլ է արել և մենք պսակադրել ենք, մորն էլ մենք ենք թաղել և կնոջն էլ, երեխաներին էլ մենք ենք .կնքել, սովից մեկ տարի առաջ ավագ քահանա եմ եղել մինչև օրս։

Ես՝ վաշլովանցի Ղուզանի որդի Բերոս, հետևյալն եմ հայտնում. Վաշլովանը գեռ էր գաղթել, մայր ու որդի իմ տանն էին բնակվում և Օրբելուն էին ծառայում։ Ճշմարիտ բացատրությունն այս է։ Պարոն դպրապետ Էշիկաղաթբաշի Դիմիտրիին հետևյալն եմ հայտնում, երդվում եմ Աստծո և Հերակլ արքայի առջև, որ ինչ լսել եմ և այս վաշլովանցիներն ասել են, որ այս մարդն Օրբելու մոտ է ապաստանել, այո, երկար ժամանակ է անցել, ես էլ այստեղ եմ նրան տեսել և դրա համար եմ բացատրում։ Այսօր ցարդ այս մարդու հետ ոչ ոք առնչություն չի ունեցել, և եթե հիմա խլեք, կամքը ձերն է։

Ես, Ղանդիաշվիլի Մարդարս, սույնի ականատեսն և վկան եմ, երբ պարոնը Ջառ մեկնեց, այդ ժամանակաշրջանում Օրբելուն էր ծառայում։ Հետո նաև այս,քո ցավը տանեմ, երբ որ Գարեթուբանը գաղթեց և քաղաք եկավ, դրանից հետո մի փողոցում հարևանությամբ էինք բնակվում, և ամբողջապես Օրբելուն էին ծառայում և այս էլ է ինձ ասել. երանի թե քո պարոնը քեզ վաճառի, որ Օրբելուն քեզ գնել տամ, որ երկուսս էլ միևնույն տիրոջ ճորտերը լինենք։ Աստծո և միապետի առաջ երդվում եմ, որ այդ այդպես է եղել։

Ես՝ ուստա Նազարենց Թամաղս, Ղանդինենց Մարբարի խոսքերի համաձայն այս վկայությունը գրավոր տվեցի Աստծո առաջ։ Ես Բերձենիշվիլի

Պետրոս, այս վերոգրյալի ականատեսը և վկան եմ Մարգարի ասած խոսքերի, Աստծո առաջ սրա վերոգրյալ խոսքի ականատեսը և ականջալուրն եմ[4]։

№ 4

ԴԱՏԱՎՃԻՌ

ԴԱՏԱՎՃԻՌ ԱՐՈՒԹԻՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼ ՊԱՏՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1778 թ., հոկտեմբերի 30

Պարոն (գանձապետի) սալթխուցեսի հրամանով պայտարների դատը վարելու համար նիստ գումարեցինք մենք՝ Բեթղեհեմի քահանա տեր Օհաննեսը և Ղորղանիշվիլի Գիորգին և կաթսայագործ Շաքրոն ու նպարավաճառների ուստաբաշի Դանելը։

Խանութի վերաբերյալ մեր խելքով Աստծո առաջ այսպես որոշեցինք, որ բոլորը խանութից դուրս էին եկել, իսկ Արութինը դուրս չէր եկել։ Մենք այսպես որոշեցինք, որ խանութը Արութինին և Իսրայելին է պատկանում։ Ինչքան որ Իսրայելը խանութի վրա ծախսի՝ կեսը Արութինինն է, կեսն էլ՝ Իսրայելինը։ Ծախսը պիտի կիսել։

Դատը մենք վճռեցինք, իսկ հրամանը Ձերն է։

Գրվեց հոկտեմբերի 30-ին, քրոնիկոնի 466 թ. (1778 թ.)։ Ջորս վերոհիշյալ անձանց կնիքները[5]։

№ 5

ԴԱՏԱՎՃԻՌ ՀԱՂՊԱՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1779 թ. մարտի 2

Երբ նորին մեծություն Վրաստանի օծյալ արքա Թեհմուրազի որդի Հերակլ Երկրորդը՝ Քարթիլիի և Կախեթի արքան, Ղազախի և Բորչալուի տիրողը, իր Աստծո սպասավոր հզոր աջով Տփղիսի բերդը խլեց Թուրքերից և տիրեց որպես սեփականի, այդ ժամանակ բերդի ներսում ի հայտ բերեց նորաշենի տաճարը և քանզի հնուց ի վեր Հաղպատինն է եղել, նույն եկեղեցուն էլ նվիրաբերեց։

Այնուհետև որոշ ժամանակ անց Ղայթմազի որդի Փիլիպեն դրա շրջակայքում տուն կառուցելու տեղ խնդրեց, և նորին մեծությունը այդ տաճարի պարսպից դուրս շնորհեց տան տեղը։

Եվ քանի որ այս դեպքը նորերս էր տեղի ունեցել, իհարկե, շատերն էին հիշում, թե պարսպի հիմքը որտեղ էր գտնվում և թե տուն կառուցելու համար ինչ տեղ է շնորհվել, որտեղ այն ժամանակ հասարակ ռամիկներ էին քողտիկներում բնակվում, այն էլ ճշտիվ գրվել է, որոնց վկայությունները այս վավերագրի մյուս երեսին արձանագրված են, իսկ տեր Փիլիպեն այդ տեղերում չէր բնակվում, պարսպի ներսում տեղ ուներ։

Քանի որ այդ տեղերից այդ քողտիկները վերցրին և կրպակներ շինեցին, եթե այդ տեղը գիտցող ճանաչող մարդ չլիներ, որ իմանար, թե որն ու՞մն էր պատկանում, շփոթմունք կլիներ։ Սակայն տվյալ պահին նման մարդիկ կային, որոնցից ոմանք կառուցողներն էին և ոմանք էլ տեղերի գիմաց վարձ հավաքողները, որոնք լավ էին հիշում։

Եվ այս խոսելիքը, որ առաջ բերին Հաղպատի եկեղեցու հովիվները և տեր Փիլիպեն, նորին մեծություն արքայի և նորին սրբություն կաթողիկոս-

---

4 Նույն տեղում, էջ 36—37։

5 Նույն տեղում, էջ 66—67։

պատիարք արքայազն Անտոնի հրամանով այս գործը քննեցինք և արդարադատությանը ներկայացրինք մենք՝ արքեպիսկոպոս Բեսարիոնը, վարդապետ Ստեփանեն, տեր Ափրիամը, տեր Եսային, տեր Ակոփը և քաղաքի այլ բազում քահանաներ, ինչպես նաև աշխարհիկ այրերից՝ ախոռապետ Իսսեն, սպարապետ Թեհմուրազը, դատավոր Իսսեն, դպիր Սուլխանը, Թումանիշվիլի դպիր Սուլխանը, Բեգթարերգի որդի դպիր-գանձապետ Սոլոմոնը, դպիր Մանուշարը։

Ինչպես նաև քաղաքի մելիք-տանուտեր Ավետիքը, Աբեսոլոմենց Հասրաթը, Թաղուենց Մկրտումը, որը այդ կրպակներ շինողն էր և սահմաններ գիտցողը, Նազարեգի որդի Օսեփը, որ այս գործին քաջատեղյակ էր մուշրիր Վորլանաշվիլի Դավիթը՝ հենց սկզբից այդ տեղերի վարձը գրանցողը և կերցնողը, ինչպես և շատ այլ մոքալաքներ։

Մեզ՝ դատավորներիս, սրանք քայլաչափով ցույց տվեցին այս տեղը, որ շնորհվել էր տեր Փիլիպեին, այս էլ ասացին, որ տաճարի պարսպի հիմքի վրա գտնվող կրպակները, դրան հանդիպակաց կրպակները ճակատով հյուսիս են նայում իսկ տաճարի պարիսպն այն է, որ նայում է դեպի արևելք թիկունքով դեպի տաճարն է ուղղված։ Այս կրպակների հիմքը հենց տաճարի պարսպի հիմքի վրա է բարձրանում, պարոնի ողորմածությամբ կալվածքն էլ տաճարինն է և շինվել է Հաղպատի ծախքով։ Եվ բոլորը ձեռքները սրտին դնելով և վերևն Աստված ասելով հավաստեցին այս ամենը։

Մենք, բոլորս այստեղ հավաքված հոգևոր և աշխարհիկ այրերս, այսպես որոշեցինք, քանի որ այսքան մարդ ձեռքը սրտին դնելով այսպես են հայտարարում, մենք սրանց հավատացինք, այսօր եղած կրպակները, որոնք արևելահայաց են ու դեպի հրապարակ են ուղղված, իսկ թիկունքով տաճարն են ուղղված՝ դրանք Հաղպատինն են և մնում են այդ եկեղեցուն։

2-ը մարտի, 1779 թ., քրոնիկոնի 467 թ. Հինգ կինք։ Սրա պատճենը տեսա և այդ փաստաթուղթը կնքեցի ես՝ Ենոքի որդի Մերաբ։ Կնիք։ Սրա պատճենը տեսա, այս դատավճիռը հաստատեցի ես՝ տեր Շմավոնի որդի կրտսեր Ստեփանս։ Երեք կնիք։ Սրա պատճենը տեսա և այս կնքեցի, տեր Ղազարանց Շաքրոյի որդի Ազալոս, (կնիք)։ Սրա պատճենը տեսա Նորին մեծության կողմից վավերացված, այս պատճենը բնագրի հետ համեմատված ծսայի ձեռքին տեսա ես՝ Թաղոյենց Մկրտումս։ Երեք կնիք։ Սրա պատճենը տեսա և այս դատավճիռը արտագրեցի ես՝ Նորին սրբության քահանա-վանական Նեոփիտես։

Ես՝ համայն Վրաստանի պատիրարք արքայազն Անտոնս, այս դատավորների դատավճռի հետ համաձայն եմ և վավերացնում եմ։

2-ը մարտի 1779 թ.։

Իոանե դպրապետ Օրբելիանիս այս դատավճիռը հաստատում եմ։ Կնիք

Նվաստ արքեպիսկոպոս Գերվիսան անարժան վարդապետ Ստեփանե։

Վավերագրի գլխավերևում։ Մենք՝ օծյալ արքա Թեհմուրազի որդե Հերակլ Երկրորդս, Վրաստանի՝ Քարթլիի, Կախեթի և այլ, և այլ, և այլ տիրույթների տիրակալս, այս դատավճիռը վավերացնում եմ։

Քանի որ այս եկեղեցին Թումանյաններին է պատկանել, երբ Աստծո օգնությամբ Տփղիսի բերդը գրավեցինք, այս եկեղեցու պատկանելությունը Գորջասպ դպրին հաստատել տվինք և որպես Հաղպատի պատկանելիք վավերացրինք։

Գրվել է մարտի 5-ին, քրոնիկոնի 467 թ.։ Կնիք[6]։

---

6 Նույն տեղում, էջ 72—74։

№ 6

ԴԱՏԱՎՃԻՌ ՁՈՐԱՆԱՇՎԻԼԻՆԵՐԻ ԵՎ ՄԵԼԻՔՍԵԹԵՆՑ ՆԱՍԻՐԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1779 թ., մարտի 6

Ձորանաշվիլի Մոսեն և Դավիթը Ղազախի Կողբի բնակիչ Մելիքսեթի որդի Նասիբի ճորտը համարելու առթիվ վիճում էին։ Մեր բնիկ ճորտն ես Ծուղրուղաշենցի,-ասում էին նրանք,-քանի դեռ Ծուղրուղաշենը չեն էր, քո հայրը այնտեղ էր ապրում և մեզ էր ծառայում, և երբ Ծուղրուղաշենը մարդաթափ եղավ, դուք ևս գաղթեցիք և գնացիք։ Եվ քեզանից բաժանված մեկը այսօր էլ մեր ճորտն է և մեզ է ծառայում։ Նասիբը պատասխանում էր. պապենական-հորական կողմից բնիկ կողբեցի եմ և ոչ իմ հայրը և ոչ ես Ծուղրուղաշենում չենք բնակվել։ Միսխանեցի Բաբուլը և Խեչատուրը ներկայացան և այսպես վկայեցին.-Նասիբը հորպապի կողմից կողբեցի է, նրա Ձորանաշվիլու ճորտ լինելու մասին չենք լսել։

Մենք՝ դատավորներս, վեր հիշատակված վկաներին երդման բերեցինք, (որ նրանք) ոտքի ելնեն և այսպես երդվեն.-Նասիբը բնիկ կողբեցի է։ Նասիբից բաժանված մեկը, որ եկել է Ձորանաշվիլիների մոտ, այս Նասիբը չի եկել նրանց մոտ և այսօր էլ բաժնյալ կալվածքը մնացել է Նասիբին։ Եվ եթե ոչ լ'ն խիզանությամբ, ապա ժառանգաբար ծուղրուղաշենցիները գործ չունեն (Նասիբի հետ)։ Եթե այսպես երդվեն վերը հիշատակված վկաները, ուրեմն կողբեցի կհամարվի Նասիբը և կմնա որպես թագուհու սեփականություն։ Իսկ եթե չերդվեն, կմնա որպես Ձորանաշվիլիների ճորտ։

Յասավուլ, այս գործը այսպես կատարիր քրոնիկոնի 467 թ.։ Երեք կնիք։

Ինչպես սույս դատավճռում էր պետք վկաներին երդվեցնել, այդպես էլ երդվեցին։

Նասիբը կողբեցի դուրս եկավ և մնաց որպես թագուհուն պատկանող։ Մարտի 10, քրոնիկոնի 467 թ.։ Երեք կնիք

Պարոնի դատավորների վճիռը հաստատում ենք մենք՝ Վրաստանի թագուհի Դարեջան[7]։

Մարտի 11, քրոնիկոնի 467թ. (1779 թ.)։

№ 7

ԽՆԴՐԱԳԻՐ ԱՅՎԱԶԻ ՃՈՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՐԱԿԼ 2-Ի ԴԱՏԱՎՃՌՈՎ ՀԱՆԴԵՐՁ

1792թ., հոկտեմբերի 16.

Աստված երջանիկ միապետի ցավր տա Սղնաղի բնակիչ Այվազին։

Իմ բացատրությունը հետևյալն է.- Երբ մայրս գեղջկություն էր անում Սղնաղում, ես կաթնակեր երեխա եմ եղել։ Վաթսուն տարեկան մարդ եմ, չգիտեմ ոչ հորս հայրենիքը և ոչ էլ հորս հիշատակն եմ ունեցել։ Վաթսուն տարի է, քո Սղնաղի բնակիչն եմ հանդիսանում։ Այժմ Բաշբեուքի որդին վիճարկում է (իմ պատկանելությունը)։ Աստված հաղթանակ շնորհի քեզ, դատավճռի արժանացրեք ինձ։ Հոկտեմբերի 9-ը, քրոնիկոնի 480 թ.։

Դատավճիռ

Մեր հրամանն այս է. այս խնդրագրի տերը, որ այս խնդրագրով այսպես գանգատվում է, նրան և Բաշբեուքաշվիլու այրուն երկուսին միասին դատարանում լսեցինք։ Այվազի որդու մասին շատերն էին վկայություն տալիս, ինչ-

7 Նույն տեղում, էջ 74—75։

պես խնդրագրում է բացատրվում, առ այն, որ այդ հասակում է եկել։ Սակայն սրան ամբաստանողը հեռուն էր մտնում.- Ոչ թե այդ հասակում է եկել, երբ դուք Աբրիսում էիք գտնվում, այդ ժամանակ է եկել։ Քանի որ այն ժամանակվա եկած է, այս Այվազի հետ Բաշրեուք. որպին ոչ մի առնչություն չունի։

Քանզի մենք այսպես ենք սահմանել.- Երջանկահիշատակ մեր հայր արքա Թեհմուրազը, երբ մեկնեց Ռուսաստան, ով այդ ժամանակվանից հետո գաղթել է Կախեթ է եկել, նա դարձյալ պիտի գաղթի և իր տիրոջը հանձնվի, չպիտի պահվի։ Իսկ եթե այդ ժամանակից առաջ է գաղթած եղել, ուրեմն այդպիսին ենթակա չէ գաղթեցման։ Մենք այդ սահմանել ենք իրավամբ։ Եվ դու Քիզիղի կառավարիչ, այդպես իմացիր։

Եվ սրանից դատ, եթե Կախեթում նմանօրինակ վերաբնակիչներ են եղել ու գնալ-գալ են ունեցել, կամ էլ հանձնված են եղել որևէ մեկին, հանձնման փաստաթուղթ էլ պիտի ունենան, այդպիսին ինչ ժամանակ էլ եկած լինի՝ թեկուզ ղզլբաշության, թեկուզ օսմանության ժամանակ, նա իր հին տիրոջը չպիտի վերադարձվի։ Միայն գնալ-գալով չի լինի, եթե որևէ մեկին հանձնված չի եղել և կամ էլ որպես ճորտ չի ծառայել նրան։

Հոկտեմբերի 16, քրոնիկոնի 480 թ.։

Հետգրություն։ Երջանկահիշատակ պարոն՝ արքա Հերակլի կողմից է շնորհված։ Ես՝ Ասլան Վաչնաձես, արտագրեցի[8]։

---

8 Նույն տեղում, էջ 582—583։